

ՌԴ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ ԱՊՀ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԵՎ ՌԴ-ՀՀ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 2000-ԱՎԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԿԵՍԵՐԻՆ

Հոդվածում լուսաբանվում է 2000-ական թվականների առաջին կեսին ռուս-հայկական հարաբերությունների զարգացման միտումները: Հարավային Կովկասում ՌԴ իրականացրած նոր ռազմավարությունը տարբերվում է 1990-ական թվականներին Մոսկվայի վարած տարածաշրջանային քաղաքականությունից: Այս շրջանում ՌԴ արտաքին քաղաքականության առաջնայնություններից էր ԱՊՀ երկրների հետ բազմակողմ և երկկողմ հարաբերությունների զարգացումը: Կարևորելով տնտեսական գործոնը անցում կատարվեց «ընտրովի ներգրավվածության» քաղաքականությանը: Չթերագնահատելով տնտեսական բաղադրիչը, այնուամենայնիվ, Մոսկվայի հետ ռազմավարական համագործակցության խորացումը առաջին հերթին ապահովում է ՀՀ ռազմական և էներգետիկ անվտանգությունը:

Հիմնաբառեր. ԱՊՀ, ՌԴ, «գունավոր հեղափոխություններ», ազգային անվտանգության հայեցակարգ, արտաքին քաղաքականության հայեցակարգ, ռազմավարական համագործակցություն

Դեռևս 1990-ական թվականներին ռուս-հայկական հարաբերությունները դաշնակցային բնույթ էին ստացել: Երկու երկրների ղեկավարների հանդիպումը պարբերական բնույթ էր կրում (Լ. Տեր-Պետրոսյանը Մոսկվա այցելեց 1995, 1996, 1997 թթ.): 1997 թ. օգոստոսի 29-ին կնքված «Ռուսաստանի Դաշնության և Հայաստանի Հանրապետության միջև բարեկամության, համագործակցության և փոխօգնության մասին» պայմանագիրը կանխորոշեց երկկողմ հարաբերությունների դաշնակցային բնույթը: Վ. Պուտինի ՌԴ նախագահ ընտրվելուց հետո եթե պաշտոնական Երևանը ակնկալում էր ռուս-հայկական հարաբերությունների հետագա խորացում, ապա ընդդիմությունը՝ ակնկալում էր, որ ՌԴ նոր իշխանությունները, անվստահությամբ կվերաբերվեն ՀՀ կողմից իրականացվող փոխլրացման քաղաքականությանը: Այս կապակցությամբ ՀՀ նախագահ Ռ. Քոչարյանը 2001 թ. սեպտեմբերի 21-ին ՀՀ անկախության հռչակման 10-րդ տարեդարձի առթիվ իր ելույթում նշեց, որ «մեր բարդ տարածաշրջանում տևական խաղաղության և կայունության գրավականը մենք տեսնում ենք տարածաշրջանային համագործակցության մեջ: Մենք պատրաստ ենք հարաբերություններ զարգացնել տարածաշրջանի բոլոր երկրների հետ:

Մենք պատրաստ ենք լուրջ համագործակցության՝ հարևանների հետ երկկողմ հարաբերությունների ողջ ընդգրկումով: Այդուհանդերձ, տարածաշրջանային մեր քաղաքականության հիմքը ավանդական գործընկերների հետ՝ ժամանակի քննությունը բռնած մեր հարաբերություններն են: Այդ հարաբերություններում Ռուսաստանն ունի իր ուրույն տեղը» [1, էջ 171]:

ՌԴ իշխանության ղեկը Վ. Պուտինը ստանձնեց բավական պատասխանատու շրջանում, երբ Մոսկվայի առջև ծառայել էին ներքին և արտաքին քաղաքականության բազմաթիվ հիմնահարցեր: Նա չէր պատկանում խորհրդային նոմենկլատուրայի վերնախավին և նրա օրոք Մոսկվայի և ԱՊՀ մյուս երկրների միջև հարաբերությունները դարձան ավելի պաշտոնական: Նշենք նաև, որ ԱՊՀ պետությունների քաղաքականությունը բնութագրվում է նաև այն հանգամանքով, որ այն էականորեն անձնավորված է և այդ տեսանկյունից բացառություն չէ նաև ՌԴ, որի արտաքին քաղաքականության կուրսը ևս մեծապես բնութագրվում և որոշվում է նախագահի անձով: ԽՍՀՄ-ի փլուզումից հետո ՌԴ քաղաքական շրջանակներին այդպես էլ չհաջողվեց մշակել այն քաղաքական-գաղափարական հենքը, որը հնարավորություն կտար ամրապնդել արտաքին քաղաքականության ինստիտուցիոնալ բնույթը:

Վ. Պուտինի նախագահության օրոք ՌԴ և նախկին ԽՍՀՄ հանրապետությունների միջև հարաբերությունները թևակոխեցին նոր փուլ, քանի որ ՌԴ նոր ղեկավարն իրենից ներկայացնում էր որակապես միանգամայն նոր ֆիզուր [2, շ. 38]: Վ. Պուտինը իր կառավարման սկզբնական շրջանում ստացավ ՌԴ բնակչության զգալի հատվածի աջակցությունն ու վստահությունը: Ռուսաստանում անցկացված սոցիոլոգիաները վկայում են, որ բնակչության 60% դրական է գնահատում Վ. Պուտինի նախագահության առաջին փուլը [3, շ. 76]:

«Պուտինի էֆեկտը» որպես պրագմատիկ և սթափ քաղաքական գործչի, որը գերծ է նախկին խորհրդային կուսակցական-տնտեսական գործչի բեռից՝ իր ուժերի նկատմամբ նոր վստահություն փոխանցեց ռուսաստանյան քաղաքական էլիտային [4, շ. 11]: Ելնելով այս հանգամանքից, Վ. Պուտինը որոշեց Ռուսաստանը դարձնել «լիբերալ կայսրություն», այսինքն օգտագործելով երկրի տնտեսական ու ֆինանսական ռեսուրսները՝ կրկին ԱՊՀ տարածքում մեծացնել Մոսկվայի ազդեցությունը: Այս տեսանկյունից բարենպաստ էր նաև միջազգային իրավիճակը: 2001 թ. սեպտեմբերի 11-ի ահաբեկչությունից հետո նկատվում էր ռուս-ամերիկյան մերձեցում և հանուն այդ գործընթացի Կրեմլը պատրաստ էր գնալ որոշ զիջումների: Փոխարենը Մոսկվան Վաշինգտոնից ակնկալում էր ԱՊՀ տարածքում ՌԴ առաջատար դերի ձանաչումը: Սակայն ամերիկացիները չզնային այդ քայլին, քանի որ ինչպես

կարծում է Դ. Տրենինը՝ ԱՄՆ-ը թերահավատությամբ էր վերաբերում ԱՊՀ տարածքում «կարգ ու կանոն» հաստատելու Մոսկվայի ընդունակություններին, ինչպես նաև կասկածում էր, թե արդյոք կպահպանվեն ԱՄՆ-ի համար ընդունելի խաղի կանոնները [4, Ը. 11-12]: Իրադարձությունների նման զարգացման արդյունքում Կրեմլը որոշեց գործել միայնակ՝ ձևավորելով սեփական «ուժի բևեռը»: Հիմնական ուղղություններից մեկը դարձավ Միասնական տնտեսական տարածության ստեղծումը: ՌԴ նոր իշխանությունները գտնում էին, որ ԱՊՀ բոլոր երկրների հետ անհրաժեշտ է զարգացնել բարիդրացիական հարաբերություններ և ձևավորել փոխշահավետ տնտեսական հարաբերություններ: 2000 թ. հունվարին Վ. Պուտինի հրամանագրով փոփոխություններ և լրացումներ կատարվեցին 1997 թ. ընդունված ՌԴ ազգային անվտանգության հայեցակարգում: Վ. Պուտինի հրամանագրով 2000 թ. ապրիլին հաստատվեց նաև ՌԴ ռազմական, իսկ հուլիսին՝ ՌԴ արտաքին քաղաքականության հայեցակարգերը: 2000 թ. հունվարի 10-ին ընդունված ՌԴ ազգային անվտանգության հայեցակարգում նշվում է, որ «միջազգային բնագավառում ՌԴ համար հիմնական սպառնալիքներ են ներկայացնում ԱՊՀ պետություններում ինտեգրացիոն գործընթացների թուլացումը, ինչպես նաև ՌԴ և ԱՊՀ երկրների սահմանների մոտ հակամարտությունների առաջացումն ու ծավալվելը» [5]:

Պատահական չէ, որ Վ. Պուտինի նախագահության սկզբնական փուլից միջպետական հարաբերություններում կարևորվեց նաև տնտեսական գործոնը: 2000-ական թվականների սկզբներին պարզ դարձավ, որ Մոսկվային չհաջողվեց պահպանել ԱՊՀ տարածքի տնտեսական և ռազմաքաղաքական միասնությունը: Ձևավորվեցին Կենտրոնական Ասիայի տնտեսական, Եվրասիական տնտեսական ընկերակցությունը, Ռուսաստանի և Բելառուսի միութենական պետությունը, ՎՈՒԱՄ-ը, ՀԱՊ-ը: Որոշ հաշվարկներով ԱՊՀ երկրներին իր ազդեցության ոլորտում պահելու համար ՌԴ տարեկան ծախսում է իր ՀՆԱ-ի 3-4% [6, Ը. 104]: Հասկանալի է, որ այս իրավիճակում Մոսկվան իր ազդեցությունը պահպանելու համար անընդհատ պետք է ավելացնեք ֆինանսական և ռեսուրսային հատկացումները, որն այդ պահին Կրեմլի ուժերից վեր էր: Այդ իսկ պատճառով նորընտիր ռուսական իշխանություններն ԱՊՀ երկրների հետ հարաբերություններում որոշեցին շեշտադրումը բազմակողմ հարաբերություններից տեղափոխել առավել արդյունավետ ու ռացիոնալ երկկողմանի հարաբերությունների վրա:

Պարբերաբար գումարվող ԱՊՀ երկրների ղեկավարների գազաթափողվներում մասնակիցներին ավելի շատ հետաքրքրում էր ոչ թե ԱՊՀ հետագա ճակատագիրը, այլ սեփական խնդիրների հանգուցալուծումը:

Նման մոտեցում դրսևորեցին նաև ՌԴ իշխանությունները 2000 թ. դեկտեմբերին Մինսկում կայացած ԱՊՀ երկրների ղեկավարների գագաթաժողովում: Ելույթ ունենալով գագաթաժողովում Վ. Պուտինը նշեց, որ «բազմակողմ գործընկերության զարգացումը համապատասխանում է ԱՊՀ երկրների շահերին, սակայն պետք է պահպանել օպտիմալ հաշվեկշիռ բազմակողմ փոխհարաբերությունների և Համագործակցության յուրաքանչյուր մասնակցի կոնկրետ շահերի միջև» [6, c. 105] ԱՊՀ երկրների նկատմամբ Մոսկվայի նոր մարտավարության մասին է վկայում նաև ՌԴ Անվտանգության խորհրդի քարտուղար Ս. Իվանովի ելույթը Սյունիսենում կայացած Միջազգային անվտանգության հիմնահարցերին նվիրված կոնֆերանսում: Իր ելույթում Ս. Իվանովը նշեց, որ «անկեղծորեն պետք է խոստովանեն, որ անցած տարվա ընթացքում որոշակիորեն վերանայվեց ԱՊՀ երկրների նկատմամբ ռուսական քաղաքականության հիմնական ուղղությունները: Դրա համար ելման կետ հանդիսացավ այն եզրահանգումը, որ մոտ հեռանկարում հնարավոր չէ Համագործակցության արագացված զարգացման հետևանքով այն դարձնել լիարժեք ինտեգրացիոն միավորում: Այս հանգամանքը մեզ կանգնեցրեց երկընտրանքի առջև՝ շարունակել դիտարկել հետխորհրդային տարածքում ինտեգրացիան որպես բացարձակ արժեք, որն արդարացնելու է գործընկերների նկատմամբ բոլոր ծախսերն ու զիջումները, թե՞ անցնել առավել սթափ և պրագմատիկ կուրսի... Արդյունքում ընտրությունը կատարվեց հօգուտ Ռուսաստանի ազգային անվտանգության շահերի ապահովման, նախ և առաջ ԱՊՀ երկրների հետ երկկողմանի հարաբերությունների զարգացմանը» [7]: ՌԴ արտգործնախարար Ի. Իվանովն անդրադառնալով ԱՊՀ տարածքում ընթացող գործընթացներին նշեց, որ «ԱՊՀ շրջանակներում տնտեսական համագործակցության խորացումը հնարավոր է միայն շուկայական հարաբերությունների հիմքի վրա, այդ գործընթացներում ֆինանսա-արդյունաբերական և բանկային կապիտալի առավել լայն ներգրավմամբ» [8, c. 185]:

Ռուս-հայկական երկկողմ հարաբերությունները նոր որակ ստացան ՀՀ նախագահ Ռ. Քոչարյանի Մոսկվա առաջին պաշտոնական այցից հետո, որն իրականացվեց 2000 թ. սեպտեմբերի 25-28-ը: Այցի կարևորագույն արդյունքը «XXI դարում ՌԴ և ՀՀ ռազմավարական փոխգործակցության մասին հռչակագիրն» էր, որը ռուս-հայկական հարաբերություններում նոր փուլ նշանավորեց: Քննարկված և համաձայնեցված մի շարք խնդիրների շարքում կարևորվում է նաև առանց մուտքի արտոնագրերի ՌԴ և ՀՀ քաղաքացիների փոխայցելության մասին համաձայնագիրը, որով Հայաստանը դարձավ ՌԴ հետ նման համաձայնագիր

կնքած առաջին պետությունն այն պահից ի վեր, երբ ՌԴ միակողմանի դադարեցրեց իր մասնակցությունը Բիշքեկի պայմանագրին [9, էջ 78]:

Մինչ այժմ և՛ Ռուսաստանը, և՛ Հայաստանը, որևէ այլ պետության հետ նմանատիպ փաստաթուղթ չեն ստորագրել: Հռչակագրի բովանդակությունից բխում էր նաև, որ ՌԴ և ՀՀ կհամագործակցեն գլոբալ և տարածաշրջանային ամենաբարդ հարցերում: Նախատեսվում էր փոխշահավետ համագործակցության նաև ռազմա-քաղաքական, սահմանների պաշտպանության, ահաբեկչության դեմ պայքարում, տնտեսական և այլ բնագավառներում:

Հռչակագրի 3-րդ կետում նշվում է, որ ՌԴ և ՀՀ հաստատում են յուրաքանչյուր կողմի իրավասությունը սեփական անվտանգությունը, քաղաքական, տնտեսական և սոցիալական զարգացումը ապահովելու ուղղությամբ ուրույն ուղիների ընտրության հարցերում [9, էջ 78]:

Այս կետից կարելի է հետևություն անել, որ կողմերից ոչ մեկը պարտավորություն չունի աջակցելու իր ռազմավարական գործընկերոջ այնպիսի պահանջներին, որը բխում է միայն կողմերից մեկի շահերից: Գործնական հարաբերություններում այն դրսևորվել է բազմիցս: Օրինակ, Ռուսաստանը, ԼՂ կարգավորման հարցում Ադրբեջանի հետ հարաբերությունները չսրելու համար աշխատում է ստանձնել «արդար միջնորդի» դեր: Մոսկվան իր պասիվ դիրքորոշումը փորձում է հիմնավորել այն հանգամանքով, որ միջնորդը պետք է չեզոք լինի: Նման բարդույթ չի դրսևորում ԵԱՀԿ Մինսկի խմբի մյուս համանախագահը՝ ԱՄՆ-ը, որը միակ երկիրն է, որ պաշտոնապես ուղղակի օգնությունն է ցույց տալիս ԼՂՀ-ին և նրա հետ պահում քաղաքական և տնտեսական հարաբերություններ: Հարավային Կովկասի հիմնախնդիրների ուսումնասիրությամբ զբաղվող Մ. Ալեքսանդրովի կարծիքով նույնպես «Լեռնային Ղարաբաղի հետ Ռուսաստանի շփումները կարող են ունենալ կարևոր դերակատարում: Այնինչ, Երևանում գտնվող ռուսաստանյան դիվանագետները, վախենում են այդ շփումներից՝ ինչպես կրակից, զերծ են մնում Լեռնային Ղարաբաղ այցելություններից, որպեսզի չհարուցեն Ադրբեջանի գայրույթը: Չափից դուրս նրբանկատությունն այս հարցում միայն վնասում է գործին և Բաքուն պետք է զգա, որ մեր կողմից այժմեական Ադրբեջանի տարածքային ամբողջականության ճանաչումը դիրքորոշում է, որի համար մշտական պետք է պայքարի ադրբեջանական կողմը» [10, Կ. 77-78]:

Իր հերթին Հայստանը «լռում» է մերժբալթյան հանրապետություններում ռուսալեզու բնակչության իրավունքների ոտնահարման հարցում, խուսափում է վրացական իշխանությունների քննադատություններից՝ չեչեն ահաբեկիչների հետ համագործակցության համար: ՌԴ արտաքին քաղաքականության հայեցակարգից, ինչպես նաև

իշխանության տարբեր ներկայացուցիչների ելույթներից բխում է, որ ԱՊՀ տարածքում տնտեսական գործունեության ընթացքում Մոսկվան կարող է «անտեսել» ռազմավարական համագործակցության գործոնը: Օրինակ, 2000 թ. սեպտեմբերին Մոսկվայում ՀՀ նախագահ Ռ. Քոչարյանի հետ հանդիպումից հետո և «XXI դարում ՌԴ և ՀՀ ռազմավարական փոխգործակցության մասին հռչակագրի» ստորագրումից հետո Վ. Պուտինը նշեց, որ «Ռուսաստանի և Հայաստանի միջև հաստատվել են առանձնահատուկ հարաբերություններ, սակայն դա չի նշանակում, որ խոսքը վերաբերում է Հայաստանին որոշ լրացուցիչ արտոնություններ տրամադրելու մասին, որոնց կարիքը նա չունի: Նույնը վերաբերվում է դարաբաղյան հակամարտության հաղթահարմանը: Ռուսաստանը չի պատրաստվում կողմերից որևէ մեկի նկատմամբ ճնշում գործադրել: Հայաստանը և Ադրբեջանը փոխադարձ զիջումների միջոցով իրենք պետք է գտնեն խնդրի լուծումը» [11]: Իհարկե, ՌԴ նախագահի այս հայտարարությունից չի բխում, որ ՌԴ փոխել է իր ռազմավարական համագործակցությունը ՀՀ նկատմամբ, սակայն ՌԴ նոր մարտավարությունն անկասկած տարբերվում էր ռուս-հայկական համագործակցության 1990-ական թվականների ոգուց: Հարավային Կովկասում ռազմա-քաղաքական տեսանկյունից ՌԴ-ի համար կարևորվում է ՀՀ:

ՌԴ նախագահ Վ. Պուտինն իր առաջին պաշտոնական այցելությունը Հայաստան իրականացրեց 2001 թ. սեպտեմբերի 14-15: Ե՛վ ռուսական, և՛ հայկական կողմը մեծ ծավալի աշխատանք էին իրականացրել այցը նախապատրաստելու ուղղությամբ: Մոսկվան և Երևանը փորձում էին զարգացնել 2000 թ. կնքված հռչակագրի դրույթները, «շունչ և ոգի» տալ դրանց: Մոսկվայի նախաձեռնությամբ Երևանը որոշ ժամանակ դարձավ ԱՊՀ շրջանակներում իրականացված տարբեր միջոցառումների հավաքատեղի: Չերապատվություն տալով անվտանգության հարցերին, Երևանում 2001 թ. ընթացքում անցկացվեց ՀԱՊ-ի երեք գագաթաժողով: 2001 թ. մայիսին ՀԱՊ-ի մասնակից պետությունների ղեկավարների նիստին մասնակցեց նաև Վ. Պուտինը: ԱՊՀ Հավաքական անվտանգության խորհրդի առաջին ղեկավար մեկ տարով ընտրվեց ՀՀ նախագահ Ռ. Քոչարյանը: Կարևորելով «կովկասյան ուղղությունը» Երևան ժամանեցին նաև ՌԴ պաշտպանության նախարար Սերգեյ Իվանովը և ՌԴ ցամաքային զորքերի հրամանատարը: Ռազմական բնագավառում համագործակցությունը նպատակ էր հետապնդում ապահովել երկու երկրների անվտանգությունը, ԱՊՀ հարավային սահմանները, ինչպես նաև Հարավային Կովկասի կայունությունը [12]:

Ռուս-հայկական տնտեսական հարաբերությունների հետագա զարգացմանը խոչընդոտում էր ՌԴ-ին հայկական կողմի 100 մլն դոլարի պարտքը, որը հիմնական գոյացել էր միջուկային վառելիքի և գազի մատակարարումներից: 2002 թ. նոյեմբերին ՌԴ վարչապետ Մ. Կասյանովի Հայաստան այցելության ընթացքում ստորագրվեց միջկառավարական համաձայնագիր արդյունաբերական հինգ ձեռնարկությունների կառավարումը Ռուսաստանին փոխանցելու մասին: ՀՀ կառավարության այդ քայլը միանշանակ չընդունվեց հանրապետությունում և ՌԴ-ում: Մի մասը գտնում էր, որ այն հաջողված գործարք է և կապահովի նոր ներդրումներ Հայաստանի տնտեսությունում [13]: Ռուսաստանյան կառավարական շրջանակների մոտ կանգնած մի աղբյուր «Իզվեստիա» թերթի թղթակցին հաղորդել է, որ Կովկասում «Հայաստանը Ռուսաստանի թերևս միակ հավատարիմ դաշնակիցն է: Մենք կարող ենք ներել իր պարտքը՝ հաշվի առնելով հանրապետության ծանր տնտեսական վիճակը: 98 մլն դոլարը այնքան էլ մեծ գումար չէ: Սակայն դրանով նախադեպ կստեղծվեր ԱՊՀ մյուս երկրների համար, որոնց պարտքերը Ռուսաստանի հանդեպ շատ ավելի են» [14]:

«Գույք պարտքի դիմաց» գործարքը մեր կարծիքով չբավարարեց երկու կողմերին էլ: Երևանը նկատի ունենալով վերջին տարիների ընթացքում ՌԴ դիմամիկ զարգացող տնտեսությունը՝ «գույք պարտքի դիմաց» գործարքով ակնկալում էր ներգրավել ռուսական ֆինանսական լրացուցիչ ռեսուրսներ ՀՀ տնտեսության հատկապես այն բնագավառներ, որտեղ դրանց կարիքը բոլորից շատ էր զգացվում: Սակայն Մոսկվային չհաջողվեց վերագործարկել ՀՀ պետական պարտքի դիմաց իրեն փոխանցված ձեռնարկությունները:

Ռուս-հայկական առևտրա-տնտեսական երկկողմ հարաբերությունների զարգացմանը նպաստեց հարաբերությունների նոր ձևաչափերի ստեղծումը: Այս տեսանկյունից արժե առանձնացնել Տնտեսական համագործակցության գծով հայ-ռուսական միջկառավարական հանձնաժողովը, ՌԴ և ՀՀ գործարար շրջանների մասնակցությամբ տարբեր համաժողովների անցկացումը և այլն: ՌԴ մաքսային ծառայության տվյալներով 2005 թ. երկու երկրների միջև ապրանքաշրջանառությունը ավելացել է 40, 2006 թ.՝ 70 տոկոսով, իսկ 2007 թ.՝ երկու երրորդով [15, շ. 11]: Ռուսական ներդրումները տարբերակված բնույթ ունեն և ընդգրկում են էներգետիկ, բանկային, լեռնա-մետալուրգիական, շինարարական, կապի և ինֆորմացիոն տեխնոլոգիաների բնագավառները:

Այսպիսով, Հայաստանի համար ՌԴ հանդիսանում է ոչ միայն ռազմա-քաղաքական, այլև տնտեսական առումով կարևոր ռազմավարական գործընկեր: Հայաստանի Հանրապետությունը Հարավային

Կովկասում հանդիսանում է ՌԴ միակ ռազմավարական դաշնակիցը: Տարածաշրջանում Մոսկվան աշխատում է հավասարակշռված քաղաքականություն վարել, որն ավելի հաջողված է Հայաստանի և Ադրբեջանի նկատմամբ, իսկ ռուս-վրացական հարաբերությունները դեռևս մնում են խնդրահարույց: Այնուամենայնիվ 2000-ական թվականների կեսերին ՌԴ: ԱՊՀ տարածքում աշխատում էր համադրել բազմակողմ և երկկողմ հարաբերությունները և համագործակցությունը զարգացնել նախ և առաջ պրագմատիկ և փոխշահավետ տեսանկյունից:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. ՌԴ կայուն զարգացումն իր հարևան պետությունների անվտանգության կարևոր գործոն է: ՌԴ կայունությունը նպաստում է Հարավային Կովկասում, Միջին Ասիայում և Կասպիական ավազանում տարածաշրջանային հավասարակշռության պահպանմանը:

2. ՌԴ միայնակ ի վիճակի չէ լուծել ԱՊՀ տարածքում առկա հակամարտությունները, սակայն դրանց զգալի մասի կարգավորումը ևս հնարավոր չէ իրականացնել առանց Մոսկվայի օժանդակության:

3. ՌԴ ոչ բավարար մակարդակով է օգտագործում հայկական գործոնը ռուս-վրացական հարաբերությունների կարգավորման գործում: Ռուս-վրացական հակամարտությունում Մոսկվան հաճախակի անտեսում է Հարավային Կովկասում իր միակ դաշնակցի շահերը:

4. 2000-ական թվականների կեսերին Հարավային Կովկասում ՌԴ քաղաքականությունում առկա էր մի կարևոր բացթողում: Տարածաշրջանում իր միակ դաշնակցի՝ Հայաստանի նկատմամբ (որը փոքրաթիվ բնակչություն ունի և մեծ ռեսուրսներ չէր պահանջում) երբեմն ոչ արդյունավետ քայլերի իրականացումը, տնտեսապես խրախուսելու քաղաքականության բացակայությունն այլ երկրների համար «անհրապուրիչ» և անհեռանկարային էր դարձնում ՌԴ հետ ռազմավարական ինտեգրման գործընթացը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **Ռոբերտ Քոչարյան**, Ելույթներ և հարցազրույցներ, Երևան, Պրինտինֆո, 2011.
2. **Алексей Малашенко**, Постсоветские государства Юга и интересы Москвы, Pro et Contra, том 5, № 3.

3. Образы российской власти: От Ельцина до Путина / Под ред. Е. Б. Шестопал.- М.: РОССПЭН, 2008
4. **Дмитрий Тренин**, Россия и конец Евразии, Pro et Contra, том 9, № 1 (28), 2005.
5. Концепция национальной безопасности Российской Федерации – nvo.ng.ru/concepts/2000-01-14/6_concept.html
6. **Юрий Шишков**, Россия и СНГ: неудавшийся брак по расчету, Pro et Contra, т. 6, № 1-2, 2001.
7. Выступление секретаря Совета Безопасности РФ Сергея Иванова на 37-й конференции по проблемам международной безопасности по теме “Глобальная и региональная безопасность в начале XXI века”, Мюнхен, 4 февраля 2001 г. – iam.duma.gov.ru/node/2/4590/16045
8. **И. С. Иванов**, Новая российская дипломатия. Десять лет внешней политики страны.- М.: ОЛМА-ПРЕСС, 2002.
9. Հայաստան 1998-2007.- Եր.: Տղթրան Մեծ, 2008:
10. **Александров М. В.**, Битва за Кавказ: 2004-2008. Институт стран СНГ, 2010.
11. Президенты России и Армении подписали Декларацию о союзническом взаимодействии двух стран в XXI веке – www.1tv.ru/news/crime/112650
12. Досье: российско-армянские отношения – itar-tass.com/info/803765
13. **Панфилова В.**, Россия платит дважды // Независимая газета, 2 февраля 2004 г.
14. Հայաստանը փոխակերպվող աշխարհում, Ռազմավարական և ազգային հետազոտությունների հայկական կենտրոն, Երևան, 2006:
15. **Прокофьев И. В.**, Российско-армянское торгово-экономическое сотрудничество // Армяно-Российское взаимодействие и региональные проблемы: материалы международной конференции (5 июня 2010 года, Ереван), Ер.: Наапет, 2011.

MARUT VARDAZARYAN

PhD in History, Associate Professor,
Head of the Department of International Relations and Diplomacy of YSU

**THE TENDENCIES OF DEVELOPMENT OF THE POLICY OF THE RUSSIAN
FEDERATION IN THE CIS TERRITORY AND RUSSIAN-ARMENIAN RELATIONS
IN THE FIRST HALF OF THE MIDST OF THE 2000TH**

Key words: CIS, South Caucasus, Caspian region, Russian-Armenian relations, Declaration on strategic cooperation, economic factor, CSTO.

The article presents tendencies of development of Russian-Armenian relations in the first half of the 2000th. The new strategy implemented by Russia in the South Caucasus is different from Moscow's regional policy of the 1900th. One of the priorities of Russian foreign policy in this period was the development of bilateral and multilateral relations with the CIS countries. The economic factor was highlighted and there was a transition to "electoral involvement". Not underestimating the economic component, however, the deepening of strategic cooperation with Moscow first of all ensures military and energy security of Armenia.

MARUT VARDAZARYAN

Заведущий кафедрой международных отношений и дипломатии ЕГУ
Кандидат ист. наук, доцент

**ТЕНДЕНЦИИ РАЗВИТИЯ ПОЛИТИКИ РФ НА ТЕРРИТОРИИ СНГ И
ВЗАИМООТНОШЕНИЯ РФ-РА
В ПЕРВОЙ ПОЛОВИНЕ 2000-Х ГОДОВ**

В статье освещается динамика и особенности российско-армянских отношений в первой половине 2000-х годов. Новая стратегия РФ на Южном Кавказе отличалась от политики 1990-х годов. В этот период приоритетным направлением внешней политики России является обеспечение соответствия многостороннего и двухстороннего сотрудничества с государствами-участниками СНГ задачам национальной безопасности страны. Был также выделен экономический фактор и произошел переход к "избирательной вовлеченности". Углубление стратегического сотрудничества с Москвой обеспечивает, в первую очередь, военную и энергетическую безопасность Армении, хотя не следует недооценивать и экономический фактор.